Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 418 - Ա
որոշման

«ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի մայիսի 16-ի N 342-Ա և 2025 թվականի ապրիլի 28-ի N 270-Ա որոշումներով բարեգործական են որակվել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող բնակելի տների և առանձնատների կառուցման ծրագրերը: Կառուցվող տները և առանձնատները նախատեսված են Լեռնային Ղարաբաղից տեղահանված բազմազավակ ընտանիքների և 44 օրյա պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների ընտանիքների համար: Այժմ, կառուցվող տները և առանձնատները կահավորելու նպատակով նախատեսվում է ձեռք բերել գույք, տեղափոխել և տեղադրել այս կառուցվող բնակելի տներում և առանձնատներում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայր և Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	19,558,333.67 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված բազմազավակ ընտանիքներ և 44 օրյա պատերազմի հետևանքով զոհված կամ հաշմանդամ զինծառայողների ընտանիքներ:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հուլիսի 6-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում կառուցվող թվով 4 բնակելի տան (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով) համար նախատեսվում է ձեռք բերել, տեղափոխել և տեղադրել մահճակալներ, զգեստապահարաններ, հագուստի կախիչներ, դարակաշարեր, կախովի պահարաններ, պահարան լվացարանի համար հարակից դարակներով, ճաշասեղաններ և աթոռներ: Իրականացվելու է 2026 թվականի հուլիսի 6-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 15,646,667 դրամի չափով. 2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում կառուցվող թվով 2 առանձնատան համար նախատեսվում է ձեռք բերել, տեղափոխել և տեղադրել մահճակալներ, զգեստապահարաններ, հագուստի կախիչներ, դարակաշարեր, կախովի պահարաններ, պահարան լվացարանի համար հարակից դարակներով, ճաշասեղաններ և աթոռներ: Իրականացվելու է 2026 թվականի հուլիսի 6-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,911,666.67 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում կառուցվող թվով 4 բնակելի տան (յուրաքանչյուրը համակցված երկու բնակարանով) համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,646,667 դրամի չափով. 2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ գյուղում կառուցվող թվով 2 առանձնատան համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,911,666.67 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

13.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ